

ISSN 0235—6848

U N P

4 90

ՌՈՒՐԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆԸ մեր խմբագրությանը սխալ տրամադրեց իր այս հոդվածը:

ԱՂԷՏԸ ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՐՉԱԴԱՆԳԵԼ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1915ի Մեծ Եղեռնից մի աննախընթաց աղէտ էր հայ ժողովրդի աղէտներով, ցաւով ու արիւնով լի պատմութեան մէջ, որ պատճառած ահաւոր մարդկային կորստից բացի, իր անդառնալի անդրադարձը ունեցաւ վերապրող հայ մարդու քաղաքական, ընկերային եւ տնտեսական կեանքում: Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ վերածնւած անկախ Հայաստանը չապրեց որպէսզի կարողանար ի մի հաւաքել Եղեռնից ճողոպրած, գաղթական ընկած մնացորդացին, լինել այն ինչ որ եղաւ Իսրայէլը՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմից յետոյ Ողջակիզումը վերապրող հրեաների համար:

Սեփական հողից զրկւած, հայրենիքից դուրս շարտւած հայր օտար երկրներ ընկաւ ու փորձեց գտնել ինքն իրեն՝ ըմբռնել կատարածը, ճանաչել իր դէմ գործւած չարիքը իր ամբողջ տարողութեամբ, հաշտութեան եզր գտնել անցեալի հետ, կամ աւելի ճիշտ՝ դիքորորուել անցեալի հանդէպ, որպէսզի կա-

ընդանայ վերագտնել իր ամբողջությունը, արժանապատուությունը, իբրեւ մարդ տարելու կարելիությունը: Օտար երկրներում իր ցաւը շալկած, փորձեց հաշուել նաեւ իր ներկայի հետ, բացատրել իր հոգին կրծող կարօտը, երազներին՝ աշխարհի մէջ ապաստանելու, իրականությունից փախչելու ճնշող բաղձանքը. փորձեց նոյնանալ շրջապատի հետ: Անգէն ու անպաշտպան դէմ հանդիման եկաւ նոր մշակոյթի, նոր կեանքի, նոր սէրերի զգլխիչ գրաւչութեան հետ. կամ կու գնաց ղրանց, կամ պալքարեց, տեղի շտեյց, կառչած մնաց իր հնին:

Արեւստը եւ մանաւանդ գրականությունը, իբրեւ արտացոլը մարդու մտային հորիզոնի, երեւակայութեան ու հոգեվիճակի, թարգմանը դարձաւ յետ-եղեռնեան Սփիւռքի քառասայն իրավիճակի: Ոճաւորեց մի նոր գրականություն, ցեղասպանութեան գրականություն, որի մէջ գեղարւեստական ձեւաւորում գտաւ հեղինակի եւ, նրա գործի ընդմիջից, զոհի հակադարձը՝ դիմագրաւել փորձած ահաւոր Աղէտին:

Հայոց ցեղասպանութեան գրականությունը իր սկզբնաւորման շրջանում. այսինքն 1915ին յաջորդող առաջին տասնամակի ընթացքում, ընդհանրապէս պատմում էր Աղէտը: Այդպիսի գրական գործերի ոճը մեծ մասամբ զգացական էր, անհուն թախիծով եւ սուգի ու տառապանքի անզոր հառաչանքներով զեղուն: Պարզ ու անպաճծ վկայություններ էին դրանք, երբեմն զուրկ գեղարւեստական գունաւորումից, բայց միշտ անկեղծ, խորը ցաւի ու մտային անբացատրելի շփոթի արգասիք: Հեղինակը իր ականատեսի ցաւագին յուշերի ճնշման տակ կբաժ, կամ մի ուրիշ վերապրողի նկարագրած սարսափելի տեսարանների ծանր ազդեցութեան տակ, փորձում էր պարզապէս գրել, արձանագրել ու այդ միջոցով յաւիտենականութեան յանձնել, աշխարհի սեփականությունը դարձնել Հայոց Եղեռնը:

Սրանց կողքին, աւելի փոքրաթիւ, բայց աւելի ցայտուն են, եւ յաւիտեան պիտի ապրեն հայոց գրականութեան անգաստանում, Աղէտի գեղարւեստական այն դրսեւորումները ուր բացակայում է անտեղի յուզականությունը եւ ուր հեղինակը Աղէտը վկայագրելուց բացի փորձում է նաեւ մեկնաբանել այն, իմաստաւորել մարդու երեւակայութեան սահմաններից դուրս՝ իր զարհուրելի փորձառությունը: Այս գեղարւեստական գործերի մէջ Աղէտը բացի թէմա լինելուց մեկնաբանւած կամ դիտարկւած է իբրեւ մի վերջաւորություն—վախճանը հաւաքական մի կեանքի, մի դարաշրջանի—որ ստիպում է կանգ առնել, բացատրել եւ արժեւորել այն, որպէսզի կեանքը շարունակի, նոր սկիզբը հնարաւոր դառնալ:

Սուրէն Պարթեւեանի «Արիւնի մատեանը» (1915, Գահիրէ), նախահեղեռնեան կոտորածների պատկերները ներկայացնող, բայց եւ Եղեռնի սարսափների տպաւորություններով միախառնւած, ապա նոյն հեղինակի «Անմահ բոցը» եւ «Զանգը հնչեց» վիպակները (1917, Աղեքսանդրիա), 1915ի Եղեռնից ներշնչւած, մարմնաւորում են հեղինակի փառաբանումը զինեալ պայքարի՝ ողորմությունը չսպասել թուրքից, ինքնապաշտպանութեան դիմել ու կռւել: Պարթեւեանը քննադատում է բոլոր նրանց, որոնք հաւատացին Երիտասարդ Թուրքերի բարի կամեցողութեան ու հայ եւ թուրք ժողովուրդների խաղաղ համակեցութեան, «Իթիթիհատը, Համիտէն հազար անգամ աւելի հայակեր, մեր ամբողջական բնաջնջումը վճռած է... Անիկա չի՛ պիտի փախցնէ մեզ ազգովին ոչնչացնելու այս երազուած ու ցարդ չի գտնուած առիթը... Եւ մենք դեռ գիտութիւն, պաշտպանութիւն պիտի ականաւելինք անոր սինլըրը կամակատարներէն...»: Պէտք էր կազմակերպւել ազգովին, ինքնապաշտպանութեան դիմել: Միակ ելքը ըստ Պարթեւեանի՝ «Ըմբոստացումը, տպստամբությունը, դէպի լեռ ինքնապաշտպան խոյանքը, կամ յուսահատ դիմադրությունը, քաղաքին մէջ... Վրէժխնդիր կատաղի ահաբեկչությունը... Աչքի՛ տեղ ա՛շք, ակռայի տեղ ակռայ... Պատուաւոր դիմագրաւումը մահուան... Ահա՛...»: Յակոբ Օշականը Եղեռնի պատումին նւիրած բայց անաւարտ թողած իր «Մնացորդաց» վէպի մէջ (Գահիրէ, 1933) փորձում է արժանաւոր պատկերը տալ հայ յեղափոխական շարժումի ու դրա առաջադրած զինեալ պայքարի: Հեգնում է նրանց, որոնք հաւատացած են թէ «Զիք փրկութիւն հայոց արտաքոյ Թուրքիոյ»:

Յեղասպանութիւնը պատմող հեղինակներ, Աղէտը իմաստաւորելու իրենց ձիգի մէջ, փորձեցին փնտռել հայու սխալը. ինքնաքննադատութեան զնացին. աններող իրապաշտութեամբ բացայայտեցին կառափնարաններում մահուան դէմ կուռղ հայ մարդու ներաշխարհի ամենազազրելի երեսակները՝ մարդկային զսպած բնազդներ, որոնք շղթայազերծում են երբ մարդ էակը անսահմանօրէն զարհուրելի մի փորձութեան է ենթարկում: Քննադատեցին, պախարակեցին նրան, որ չի տոկացել, չի կառչել իր մարդկային արժանիքներին: Արամ Անտոնեանի «Այն սեւ օրերուն» իրապաշտ պատկերների մէջ, տեղահանւած հայ զաղթական խլեակները, Եփրատի գետահովտում, Մեսքենէյի ժամանակաւոր կայանում, նկարագրւած են իրենց ամենաստորին բնազդներին անձնատուր, ուրիշների դժբախտութեան մէջ իրենց շահը փնտռելու անընդունելի արարքների մէջ: Անտոնեանը մեկնաբանում է երեւոյթը՝ «Համատարած թշաւոտութիւնը, ցաւին ընդհանրականութիւնը, մահերու յաճախադէպութիւնը, վերջապէս այդ անիծած կեանքին բոլոր տուայտանքն ու շարշարանքները մարդիկը տարապալման կերպով հսապաշտ դարձուցած էին»: Եւ այդ հսապաշտութիւնը մէկ մէկ դահիճներ էր դարձրել հէնց զոհերին: «Առաջին մէկ քանի ամիսներէն հոք ամենքն ալ [ժանդարմները—Ռ. Փ.] համոզուէին թէ Հայուն գէշութիւն ընելու համար դարձեալ Հայն է լաւագոյն միջոցը... [մեծատառերի գործածութիւնը Անտոնեանինն է— Ռ. Փ.]»:

Յակոբ Օշականը «Մնացորդաց»ի մէջ անխնայ քննադատութեան տարափ է տեղում հայ ժողովրդի անցեալի ու ներկայի մտայնութեան, ղեկավարութեան վարած քաղաքականութեան եւ հոգեւորականութեան պարտադրած աշխարհայացքի դէմ: Ինքնաքննադատութեան նոյն այս ծիրում, դարձեալ «Մնացորդաց»ի մէջ, Օշականը Աղէտը մեկնաբանում է իբրեւ հայի բերած շարիքը հային: «... Լրտեսութեան համատարած ցանցը, հարստանալու, սողալու, իր գդակը ջուրէն շոր հանելու տաղանդը իրար լրացուցին... 915ը կարելի չէր (ընդգծումը Օշականին է) եթէ մեր բարեկամները (նպատակը հայ դաւաճաններն են— Ռ. Փ.) քիչ ըլլային քիչ մը: Որքան շատ է մեր ըսելիքը ոչ թե թուրքի, այլ մեզի մանաւանդ»: Նոյն ինքնաքննադատական մտայնութեամբ վահան թէքէանը «Պտուկը» (1928) բանաստեղծութեան մէջ Աղէտը ազգային դրամա է ներկայացնում ու ներհայեաց դատումներ կատարում,

Մենք էր — երբեմն հաւուսա
Էինք մեզմով, բայց ալ չենք,
Մեզ մատենցի՞նք ի կորուստ.
Ո՛վ ստովում, մեզ կերանք մենք...

Բայց այս սուր ինքնաքննադատումին առնթեր, կարծես չբաւարարւած հայու թերութիւններով շափելու Յեղասպանութեան ահագնութիւնը, հեղինակը աշքերը վեր է բարձրացնում ու փորձում դահիճին տեսնել: Ի՞նչը թուրքին դրդեց գործելու այդ անմարդկային ոճիւրը: Ինչպէ՞ս կարողացաւ Պարթեւեանը «Անմահ բոցը»ի մէջ ներկայացնում է լիարիւն տիպարը թուրքի, նկարագրում է նրա բնաւորութեան գծերը, զգացումները՝ նախանձ, կիրք, ընչաքաղցութիւն: Նրա գործած ոճիւրի ետեւ բացայայտւած են նրա թաքուն դրդապատճառները՝ ոճիւրը մեկնաբանւած է: Ոճիւրի իրական հեղինակը ներկայացւած:

Յակոբ Օշականի «Կայսերական յաղթերգութիւն» հաւաքածոյի մէջ (գրւած 1920ին, Պոլսում) տեղ գտած «Վրդովուած խղձմտանքը» եւ «Վրէժը» պատկերներում հայոց Նզդունը դիտում է այն գործադրողների ու նրան մասնակցող թուրք ամբոխի տեսանկիւնից: Օշականը փորձում է հայերի շարքը ներկայացնել իբրեւ թուրքի հասկացած մահմեդականութեան մի խորհրդաւոր ու սրբազան ծէս, որ արդարացնում ու սրբագործում է արարողութիւնը՝ անհաւատի արիւնը իբրեւ երկիւղած մի զոհագործութիւն Աստծու ոտքերին թափելը:

Թուրքի էութեան, հոգեբանութեան ու բնազդային մղումների պեղումի մէջ աւելի ու աւելի է խորանում Օշականը «Մակ պտուկը», «Հաճի Ապստուլահ», «Հարիւր մէկ տարուան» եւ «Մնացորդաց» վէպերի մէջ: Նա փորձում է, ամենայն սառնասրտութեամբ, տալ պատկերը թուրքի, բացել նրա հոգու ամենա-

մութ ծալքերը, տարրալուծել դարերից եկած, կրօնի ու մշակույթի հնոցում թրծւած, ազգային բնատրուծին դարձած, նրա հոգեբանական մղումներն ու թաքուն իղձերը: Փորձում է գտնել պատասխանը այդ մեծ ինչո՞ւ-ի: Բացատրել թէ ինչո՞ւ «... թուրքերը, եպարքոսէն մինչեւ գեղջուկ հովիւր, խորագոյն հանդարտութեամբ ընդունեցին բնաջնջման պատգամը: Ատիկա հին դարերու բնազդներու հրաւեր մըն էր, իրենց համար շատ հաճելի»: Ու իր գծած գեղարուեստական պատկերները եզրակացութեամբ՝ շարունակում է, «Ո՛չ միայն ոճրագործ մարդեր ունին գոյութիւն: Ունին գոյութիւն ոճրադործ ցեղեր: Ու թուրքերը չեն մերժեր այդ պատիւը»:

Յեղասպանութիւնը պատմող գրական երկը սկզբնաւորից յետ-եղեռնեան Սփիւռքի գրականութիւնը. դարձաւ հիմքը հասկանալու, մեկնաբանելու համար յետագայ սերունդների ստեղծագործած գրականութիւնը, որի մէջ Աղէտը չի պատմում, այլ արձագանգում է իբրեւ անբացատրելի մի ցաւ, շրուծւած մի վէրք:

Վազգէն Շուշանեանը, եղեռնին որբացած «Սալայատակներու տիղմի ու սանձարձակ պատանութեան վտանգը» ճանչցած, որբանոցներում մեծցած եւ վերջապէս Փարիզ ընկած զգալուն երիտասարդը, անցեալի յիշատակների մէջ փորձեց վերագտնել իր մանկական հոգու մաքրութիւնն ու անկեղծութիւնը: Եւ ներկայի տիւրը իրավիճակից եւ ապագայի անստուգութիւնից խոյս տալու համար մխրձեց երազների մէջ, ապրեց մանկութեան քաղցր յուշերով: «Արդարեւ, կանուխէն հոգիս ճանչցած է երկու հրճւանք ու մարմինս երկու սնունդ, երկու մանանայ—յիշատակն ու երազը»: Շուշանեանի ամբողջ գրական ժառանգութեան վրայ առանցքային ազդեցութիւն են թողել անցեալի յիշատակները. «Երկիր յիշատակաց»ը ամենացայտուն դրսեւորումն է այդ թէմայի: Եւ ինքն է խոստովանում թէ «Փոքրիկ բաներ են այս բոլորը, աննշան յիշատակներ, որ հունը գտած ու երջանիկ մարդ մը պէտք է վաղուց մոռցած ըլլայ, մինչդեռ ամեն օր, այս փոքրիկ բաները մտքիս հորիզոնի վրայ կը կուտակուին անընդհատ, կարգով ու շտապով կը վերագառնան ինձի եւ ես կը վերագառնամ հայրենական մեր խաղաւէտ տան...»:

Օտարութեան մէջ ամէն օրեայ անագորոյն գոյապայքարի մէջ թակարդւած յետ-եղեռնեան առաջին սերնդի համար ներկան տխուր է, ոչինչ չունի սփոփիչ, ապագան ահաւոր կերպով անորոշ. իսկ անցեալի քաղցր յուշերը այնքան ժլատ են, միախառնւած սարսափի ու զրկանքի, անթիւ մեռելների ծանր յիշատակների հետ: Շուշանեանի պէս որբացած սերունդը, Անապատի սերունդը, Շուշանեանի հետ միասին «... իրենց նորակազմ, բայց ամուր ու բարի ուսերուն վրայ իրենց ազնիւ մեռելները պէտք է կրեն...»: Լեւոն Զուռն Սիրմէլեանը, ինքն էլ որբացած, գիտակցում էր այդ եւ իր մտքի ու հրեակայութեան արգասիքն էր բերում ն:իրելու այդ մեռելներին: Արդարեւ, «Լոյս Զուարթ» բանաստեղծութիւնների ժողովածոյի մէջ (Փարիզ, 1924) «Ասացուածք ծառ տընկելու առթիւ» բանաստեղծութիւնը նա վերջացնում է «Մեռելներու իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի» խորհրդալից տողով: «Լոյս Զուարթ»ի մէջ կորցրած հայրենիքի, եղեռնին զոհ գնացած ծնողների, մանկութեան յիշատակների ծանր ապրումներով բեռնաւոր, երիտասարդ բանաստեղծի սիրտն է տրոփում: Այնտեղ Աղէտը թէմա չէ, այլ մի խորհրդաւոր վախճան, որ բաժանում է հեղինակին իր մանկութիւնից, իր մեռած հօրից ու մօրից: «Տունիս յիշատակը» բանաստեղծութեան մէջ հին պատկերներն են վերակենդանանում՝

Կը փնտռեմ երգելով իմ տունս՝ ալ յիշատակ,
Մի՞նչ կ'ազօտի օրէօր իր պատկերը մ'եւրիմ.

Կըյիշեմ ֆօրս պատկերն՝ ինչպէս գլուխն Յիսուսին,
Մայրս՝ առում ու բարի, դեռ աղջիկ մ'էր նազելի.

«Ասացուածք լուսութեան» բանաստեղծութեան մէջ դարձեալ մեռած մօր պատկերն է՝

Պզտիկ ագին իմ պզտիկ մօր,
Պատկերն որուն ներմակ հարսի

Թաշկիճակով մը սեւածիր
ես ծածկեցի:

Օ, Լուսբ մե,

Իջի՛ր իջի՛ր,
Ու ծածկէ գիս
Հոգիի՜ն պէս իմ մայրիկիս,
Աղուտ, ԲՅՖՈ՛ւշ իմ մայրիկիս:

Ուրեմն, փախչել իրականութիւնից, ապաւինել երազին, ապրել անցեալի յիշատակներով, որովհետեւ ներկան ոչինչ չունի գրաւիչ, իսկ ապագան մութ է ու անյոյս:

Անդրանիկ Ծառուկեանը, եղեռնից ազատած, ինքն էլ իր սերնդակիցներին պէս որբանոցի մէջ մեծացած եւ հեղինակը՝ այնքան խորը յուզականութեամբ ստեղծագործած «Մանկութիւն շունեցող մարդիկ» վէպ-ինքնակենսագրութեան, «Հող եւ արիւն» բանաստեղծութեան մէջ, նշեալներն զոհ դարձած հայրերի բախտին է երանի տալիս՝

Ճակատագիրը դաժան ու նաեւ բախտը ձեր սեւ,
Ձեզմէ յետոյ ու ձեզմով եղաւ մերինը նաեւ...

Յյլ բիւ՝ անգամ մեկ դժբախտ եղան՞ք ձեզմէ եւ անտէր.
Երեւէկ, Երեւէկ արդ կու տանք ձեր սեւ օրին, հէ՛տ հայեր...

Ծառուկեանի համար էլ ներկան սեւ է ու տխուր, ու միակ ապաւէնը՝ յիշատակները անցեալի. 1939ին Հալէպի մէջ լոյս տեսած «Առագաստներ» ժողովածոյի քերթածներէից մէկի մէջ գրում է՝

Հոգիս՝ լքուած բոլորէն ու մերժուած ու վտար՝
Հուկ ապաւէնն իր փնտռել կ երթայ խորեւն անցեալին...

Յոռետեսութիւն դէպի ներկան ու ապագան: Խորտակւել են դարաւոր կուսնները. անիմաստ են դարձել հին օրէնքները. իսկ նորերը դեռ չեն ստեղծուած: Ու հայը նահանջում է յուսահատ: Շահան Շահնուրը, պատերազմից յետոյ Փարիզ ապաստանած, յուսահատ վկան է այդ նահանջի: «Նահանջը, նահանջը հայերուն: Կոիւր սրբազան բան է, ճակատամարտը երբեմը նոյնիսկ օգտակար, անոնցմէ ազգ մը դուրս կուգայ պարտուած կամ յաղթական. սակայն երկու պարագային ալ դուրս կուգայ: Բայց նահանջը հոգիներու գլխի պտոյտ տուող սա զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամեն բան»:

Շահան Շահնուրի «Նահանջը առանց հրգի»-ն (Փարիզ, 1929) վէպն է Սփիւռքի, որի մութ հորիզոններում տւայտում է մի ամբողջ սերունդ, պայքարում է համակերպելու միջավայրին, փորձում է իր ինքնութեան երկուութեան թնշուկը լուծել: Այդ պայքարի մէջ կամ տանուլ է տալիս՝ հոգեպէս ջախջախում, ու այլեւս անընդունակ ապրելու, մի յուսահատ նոպայի մէջ վերջ է տալիս ինքն իր կեանքին. իսկ աւելի յաճախ հեռանում է, օտարանում: Այս պարագային էլ նա այլեւս մեռած է հայութեան համար: Կամ շարունակում է անյոյս կոիւր եւ յուսահատ պայքարի մէջ փորձում է գտնել սկզբնաղբիւրը իր տառապանքի՝ հասկանալ Սկէտը: Ու դարձեալ ներ-հայեաց վերլուծում իրապական բոլոր արժէքների բոլոր մեծութիւնների հէնց իր անմիջական նա-

խորդներին, քանի որ դրանք չեն կարողացել իրեն փոխանցել միջոցը, չեն տոկալու, Աղէտը վերապրելու: Այս նոյն ընդվզումի հետեւանքն է «Մենք» խմբակցութեան իրողութիւնը իր հավատոյ հանգանակով, իր նպատակներով, նոր խմբակցութեան անգամ՝ Նարդունիի խօսքերով՝ երիտասարդ ըմբռնների այս խումբը ասպարէզ է իջել փնտռելու «Երիտասարդը, որ թօթափած է հին ականգութեանց փողին: Մենք երիտասարդներ կը փնտռենք նոր հօգով պատերազմէն քանդուած եւ զինադադարէն յետոյ վերաշինուած քաղաքներու պէս նոր եւ արդիական... Մենք դարձնալ ասպարէզ պիտի գանք ցուցադրելու սնանկութիւնը այն գրագէտներուն, որոնք Եւրոպա եկան եւ արեւմտեան կեանք ասպարէսներ ծախեցին մեզի: Մեր քաղաքական սխալը արդիւնքն է գրական սխալ orientationի մը: Մեր հին գրականութիւնն էր, այն էր որ Եւրոպայէն եկաւ, որ քանդեց մեր տունը...»:

Սփիւռեան մղձաւանջը արտացոլող Շահնուրի նկարագրած մութ պատկերները ու այդ միջավայրում գոյապայքարի մէջ մտած հայ երիտասարդի կամքը, ընկրկումներն ու վախը դրսևորող թէմաները կրկնուած են նրա սերունդակից միւս արձակագիրներին մօտ եւս Զարեհ Որբունիի («Փորձը, 1929, ապա քառորդ դար յետոյ, «Եւ եղեւ մարդ», եւ «Սովորական օր մը»), Հրաչ Զարդաբեանի («Մեր Կեանքը», 1934) եւ այլն:

Այս սերունդի սերնդի ստեղծած գրականութիւն եւ որդեգրած ընթացքը հէնց ամենախօսուն պատկերն է Սփիւռքի՝ յետ-եղեռնեան բառասանին իրավիճակով: 3. Օշականի մեկնաբանութեամբ «Սփիւքը Աղէտն է անշուշտ երկարաձգած բայց անկէ տարբեր. աւելի է բանով մը որ դիւրաւ չի բացատրուիր: 1920ին մեր երիտասարդութիւնը, գրական ճակատի մէջ միութիւն մըն էր Պոլիս: 1930ին, այսինքն Սփիւքի սկզբնաւորութեան (ընգծումը հեղինակինն է, — Լ. Փ.), այդ ճակատը ոչ միայն քայքայուած է, այլ այդ երիտասարդութիւնը պատնէշներու ետեւէն կը յարուած է աջ ու ձախ, իր երէկուան պայքարի ընկերը, իր տասը տարի առաջուան ուսուցիչները, իր մանկութեան ժամանակ իր ժողովրդին գրական սպասն անող գրագէտները»:

Սփիւքը Աղէտն է երկարաձգած:

Վերքերը դեռ չեն սպիացած: Աքսորի ճամբաներից, անցած ու եղեռնի սարսափների կործանիչ ստերից երէք շփեցազատած որբունիները նոր աշխարհներում ընտանիք են կազմում սերունդներ տալիս. ու մօր կաթի հետ, հօր հիւանդագին հոգածութեան, մեծ մօր ու մեծ հօր անխնդ զուրկութան հետ մի տխուր, մի անհասկանալի ալիք է անցնում նոր սերնդի հոգու մէջ. եւ ժամանակ առ ժամանակ յորդում է, վեր բարձրանում ու հոգին ալեկոծում. կարծես հոգն է կանչում: Հետո Քանդաւ Սիթիում հայրենիքի «հողի տնքոցն է լսում», Սփիւքը մասնակցութեամբ, հայրենի հողը շտեմած Յակոբ Կարապետից իր դալով աշքերի մէջ «կրում է իր տարագիր ժողովրդի ցաւը, կարօտը»: Ժերալդ Շալեանը Փարիզում իր պատմագիտական ուսումնասիրութիւնների մէջ անգամ իր «յիշատակների յիշատակից» հալածւած «մանկութեան սեւագղեստ պառաւի յուշեր»ի ահաւոր պատկերներն է տեսնում:

Ժամանակները փոխում են, երիտասարդ սերունդը օտար երկիրներին տակ բոյն դրած, ծննդավայրի լեզուն սերտած, իր մօր լեզուն էլ է մոռանում: Լեզուի հարազատութեամբ ու ազգային ականգոյթների թելերով հիւսւած կապը մաշում է: Հայր ու զաւակ յարաբերութիւնների մէջ բացւած վիճը օրէ օր աւելի խորանում: Անգլիագիր բանաստեղծ Դէյվիդ Խերդեանը որքան պիտի ցանկանար Ուիքսմանը ի ազատ միջավայրում ամբողջ հոգով ու սրտով վայելել կեանքը. մոռանալ Ադաման որտեղից հայրն էր աքսորի ճամբան բռնել, Աֆիոն Գարահիսարը ուր մայրն էր իր տխուր մանկութիւնը անց կացրել: Բայց ի՞նչ է անունը այդ սուր ցաւի ու դառնութեան որ ճնշում է նրա հոգին՝

Ինչու եմ սպասել մինչեւ քո մահը
Իմանալու քէ քո դարձած հողը
Հայաստանն էր, ցանկապատի գոյնը՝
յարգանքիդ հաւաստիքը Աղանային,
ու մեր լանգամներն իրարուց
քո կարօտից էր հայրենիքիդ
ու իմ անգլիէնից:

Աղէտը՝ դեռ չմարսւած:

Անգլերէն են խօսում, լեզուն կորել է, օտաբացել են: Բայց ցար դեռ կայ. չլուծւած թնջուկ, որ մերթ ընդ մերթ մղձավանջ է դառնում հանգիստը խանգարում: Դայանա Տ. Յովհաննիսեանը իր երկճիւղած ինքնութեան անհաշտ պայքարի մէջ տալտում՝

արիւնոտ մի քեզ գտայ գետնում իմ սուգն:

«Դու այդ պէտք չունէիր» ձայնն ասայ:

Անդամատւած մարմինների ծով տեսայ,

հորիզոնում կուտակւած:

«Դու այդ ոսկորները պէտք չունես իսկապէս»:

Դռնք ամբողջ հողն էին ծածկել:

«Դու այդ նամակները պէտք չունէիր, չէ»:

Ի՞նչ պիտի անես այդ ամբողջ փառելով:

Փշրած շիակներից մի սար բարձրացաւ:

«Դու Մաթիս սարը պէտք չունէիր, չէ»:

Փորձեցի խօսել. լեզու չկար. շունչս սառեց:

«Դու լեզուն պէտք չունէիր, չէ»:

Ես արքնացայ, լացեցի, հայելու մէջ նայեցի:

Այնտեղ մի ամերիկացի էր միայն, գեղեցիկ հագնւած:

Փիթըր Բալաքեանը անգլերէն է գրում, հայերէնով միայն իր մեծ մայրն էր խօսում, որ հիմա չկայ, կան յուշեր սակայն, որ նրա հետ շեն մեռել: Մի ամբողջ ժողովրդի տառապանքն ու մահը կծկաւոր պատկերներով, երազի ու արթնութեան տեսիլներով, ներկայի ամենօրեայ կեանքի տեսարանների հետ միախառնւած Բալաքեանի «Լոյսի տխուր օրեր» բանաստեղծութիւնների շարքն են ստեղծագործել:

Մեծ մօր սեւ յուշերը, նրա հոգու անբուժելի վէրքը՝ անհաւասարակշիւ ու անբնական կեանքի ու ամենօրեայ յարաբերութիւնների մէջ ի յայտ, տառապանքի, յուսահատութեան, անբացատրելի մի ցաւի, բայց միեւնոյն ժամանակ երեւակայութեան բարձր թռիչքի ու ստեղծագործող Լէոնարդո Ալիշանի համար: Մահւան այլ լանդաշտ տեսիլների յաճախանքի տակ կքած, Ալիշանը փորձում է առնչել հաշտութեան եզր գտնել Աղէտի հետ, մահւան հետ, որ իր մեծ մօրն է եղել, իր ժողովրդին: Ու մեծ մօր հոգին աւերակ դարձնելուց յետոյ հիմա իր կեանքին է սպառնում՝ «Հոգու անդորրութիւն» մի կարմիր արջուկ, հայրս ինձ բերեց երբ կոկորդիս գեղձերն էին հանում: Ես այն կորցրի չգիտեմ եկեղեցում թէ գերեզմանատանը երբ մեծ մայրս մահացաւ: Նա էլ խելագար մեռաւ, թուրք ձիաւորներ էր տեսնում հիւանդանոցի իր սենեակի մէջ»:

Յետ-եղեռնեան Սփիւռքի առաջին սերնդի մղձաւանջը, նոյն խստութեամբ, շարունակւում է նաեւ երկրորդ սերնդի կեանքում: Շահնուրի Պետրոսը, Սուրէնն ու Հրաչը, չորս տասնամեակ յետոյ, կարծես վերամարմնաւորւում են Փիթըր Նաճարեանի «Voyages» (Ճամբորդութիւններ) վէպի հերոսներ՝ Արամի եւ Երոյի մէջ: Օտար է Ամերիկան՝ Ամերիկա ծնւած բայց իր արմատները փնտռող հայի համար, որքան օտար էր Ֆրանսիան Անապատի սերնդի համար: Նոյն թնջուկն է՝ երկուութեան անլուծելի առեղծաժի, նոյն փնտառուքը ինքնութեան, նոյն կարօտախտն է, բայց այս անգամ շտեմած չապրած մի երկրի, անցեալի սարսափելի յիշատակներն են հոգեհալած, բայց այս անգամ յիշատակներ՝ ծնողներից փոխանցւած:

Թուրքերի գեհնիկ ժխտումը, ուրացումը Ռճիրի՝ աւելի ու աւելի է բոցավառում կրակը հոգիների: Այսօրայ Սփիւռքում ստեղծւած գրականութեան բայց մանաւանդ նոր սերնդի կատարած գրական փորձերի մէջ շեշտւում է ցատկի եւ ընդվզումի զգացումը այս անգամ ոչ Աստուծո՛ւ դէմ, ոչ ճակատագրի, ինչպէս Վահան Թէքեանն էր պոռթկացել, բայց հէնց ուղղակի Ռճիրը նիւթած թուրքի դէմ, ու վրէժ՝ այդ Ռճիրը ուրացող այսօրայ թուրքից: Երիտասարդ բանաստեղծ Հրակը Իրւնդից «Արիւնոտ ծնունդ նոր Այգաբացի» բանաստեղծութեան մէջ մեր նոր օրերի պայքարն է երգում: Լիզբոնի հինգ հերոսների բացած վրէժի ճամբով է միայն նոր Այգաբացիները տեսնում:

Արիւնն է յորդում
ու դառնում վեհու,
Հաւատք,
Մաքառում...
Եւ, ծլաճալիւմ սերմերը յայսի
սերմերը յայսի

Եւ պատգամը ձեր՝
դառնում մարտակոչ
նաանող սերունդի:
(1983)

Մհեր Գարագաշեանը ազատութեան է ձգուում: Նրա «Ասպատակումներ» թատերգութեան հերոսը բանտում ընդվզում է աշխարհի անարդարութեան դէմ, որովհետեւ «Աշխարհի վրայ մնացած քանի մը սերմ ազատութիւնը ձմւեցաւ մուրճին տակ»: Ինքը մարտիրոսն է այդ ազատութեան, «Վախ չունիմ մեռնելէ, բայց... բայց զիս ձմեթկող, շնչահեղձող այլ սարսափ մը կայ: Պիտի ըլլա՞յ հոգիս սերմնացան բազէ մը, որ փոթորկէ շունչեր նորերուն, դուրսիններուն՝ քայլ առնելու գէպի ուբակէջ հսկայէն յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով ճանապարհո՞ղ» (1985):

Ինչպէ՛ս յարմարե՛ն Աղէտի անմեռ յիշատակների ու նրա ստեղծած հե-
տեանքների հետ: Անդորոտութեամբ ու պաղարիւն հա նայել ու Աղէտը դիտել
իրբեւ անցեալի փորձառութիւն, փորձել իմաստաւորել այդ փորձառութիւնը:
Ի՞նչ վերջապէս ստեղծել երգ երգոցը, որ պիտի լինէր վերջին կայծը ցեղասպա-
նութեան գրականութեան, պիտի առկայձէր վերջին կայծը ցեղասպանութեան
գրական ազդումների, որից յետոյ բացւէր նոր էջը սփիւռեան գրականութեան՝
սուելի առողջ, ազատ ու համամարդկային տեսլականով:

Ինչպէ՞ս, թէ ինչո՞ւ, ո՞րն է հարցը հարցերի:

ինչու՞ն յարգում էր, երբ դեռ շարունակում է Ալեյտը Սփիրտը՝ օտարումի՝ ձուլումի մէջ. երբ անորոշ ապագայի հեռանկարից պատրանաթափ են լինում սրտերը, թուրքի ստոր ուրաջումից վառում են հոգիները։ Յնդասպանութիւնը շարունակում է։ Ու քահի դեռ կայ այդ չլուծած շրացաւորած թշուալը, քահի դեռ չի բուծւել վէրքը մերթ ցաւ բերող, մերթ ցասում ու վրէժ արթնացնող. Աղէտը պիտի շարունակի արծադանդեղ սփիրտքահայ գրականութեան մէջ։